



Համարը N 171
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 1998.03.28/7(40)
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահի
 պաշտոնակատար
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 07.04.1998

Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 11.03.1998
Ստորագրման ամսաթիվը 11.03.1998
Վավերացման ամսաթիվը 11.03.1998
Ուժը կորցնելու ամսաթիվը

☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
 Հայաստանի Հանրապետության
 Նախագահի պաշտոնակատար
 Ռ. Քոչարյան
 11 մարտի 1998 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մարտի 1998 թվականի N 171
 քաղ. Երևան

ԱԳՐԱՐԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ագրարային պետական տեսչությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2 հոդվածին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է՝**

Հաստատել՝

ա) երկրագործության կանոնները (կցվում է).

բ) անասնապահության կանոնները (կցվում է).

գ) գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման կանոնները (կցվում է).

դ) Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների անվանացանկը (կցվում է).

(«դ» կետը խմբ. 30.09.00 N 608)

ե) Հայաստանի Հանրապետության համար կարանտինային նշանակություն ունեցող բույսերի վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի անվանացանկը (կցվում է).

զ) կարանտինային անվտանգության ապահովման նպատակով կարգավորվող առարկաների (կարանտինի օբյեկտ)՝ բույսերի, բուսական արտադրանքի, բեռնարկղի, փաթեթավորման և այլ նյութերի անվանացանկը (կցվում է):

(«զ» կետը խմբ. 07.02.01 N 608)

Հայաստանի Հանրապետության
 վարչապետ

Ռ. Քոչարյան

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոններով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների կողմից իրականացվող երկրագործության կանոնները:

2. Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտները և քաղաքացիներն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոններով:

II. Հողերի մշակությունը, պարարտանյութերի ու թունանյութերի օգտագործումը, մոլիբդենային բուսականության դեմ տարվող պայքարը

3. Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտները և քաղաքացիները պարտավոր են իրականացնել՝

- ա) հողի հիմնական, նախացանքային, հետցանքային և միջշարքային մշակության համալիր միջոցառումները.
- բ) հողի հողատարումը կանխարգելող համալիր միջոցառումները.
- գ) հողի երկրորդային աղակալումը և ճահճացումը կանխարգելող համալիր միջոցառումները.
- դ) հողի խորքային ջրերի թույլատրելի մակարդակի պահպանումը, ինչպես նաև մշակաբույսերի ոռոգման ընթացքում գերխոնավության կանխարգելումը.
- ե) հողի օգտակար հատկանիշների պահպանման համալիր միջոցառումները.
- զ) հողը պարարտանյութերի, թունանյութերի և կենսապատրաստուկների վնասակար մնացորդների աղտոտումից պաշտպանելու միջոցառումները.
- է) հողի հիմնական սննդատարրերի (ազոտ, ֆոսֆոր, կալիում) պակասը լրացնող համալիր միջոցառումները.
- ը) պարարտացման համալիր միջոցառումների կատարման ընթացքում սանիտարական և ֆիտոսանիտարական անվտանգությունը:

4. Արգելվում է՝

- ա) համապատասխանության սերտիֆիկատ չունեցող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների անվանացանկում չընդգրկված, ինչպես նաև ընդգրկված, բայց ժամկետանց թունանյութերի և կենսաբանական միջոցների ներկրումն ու օգտագործումը.
- բ) սանիտարական և ֆիտոսանիտարական նորմերին չհամապատասխանող պահեստներում ու շինություններում պարարտանյութերի, թունանյութերի և կենսապատրաստուկների պահպանումը.
- գ) պահեստներում պարարտանյութերի, թունանյութերի, կենսապատրաստուկների և սննդամթերքի համատեղ պահպանումը, փոխադրամիջոցներով դրանց միաժամանակյա փոխադրումը.
- դ) բուսաբուծական այն մթերքի իրացումը, որը պարունակում է թունանյութերի պարարտանյութերի անթույլատրելի քանակություն:

(4-րդ կետը խմբ. 30.09.00 N 608)

III. Սերմնանյութի և տնկանյութի արտադրությունը, ներմուծումը, իրացումն ու որակի պահպանումը

5. Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտները և քաղաքացիները պարտավոր են ապահովել՝

- ա) սերմնանյութի ու տնկանյութի արտադրության համար հողի և տեղանքի ընտրությունը.
- բ) մշակաբույսերի փոխանակությունը.
- գ) սերմնանյութի ու տնկանյութի սորտայնության (սորտ, հիբրիդ, վերարտադրություն) դասի և որակի վկայականի առկայությունը.
- դ) սորտերի շրջանացվածությունը.
- ե) սերմնանյութի և տնկանյութի նախացանքային մշակությունը՝ զտումը, տեսակավորումը, ախտահանումը.
- զ) սերմնադաշտերի և տնկարանների գնահատման (ապրոբացիա) հատուկ միջոցառումների իրականացումը.
- է) սերմնանյութի ու տնկանյութի ներկրման, փոխադրման, պահպանման, վաճառքի և օգտագործման համալիր միջոցառումների (փաթեթավորում, պիտակավորում, որակի և կարանտինային վկայական) իրականացումը:

6. Արգելվում է անհայտ ծագում ունեցող սերմնայնության և տնկանյութի օգտագործումը:

IV. Բույսերի տարածված և կարանտինային հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ տարվող պայքարը

7. Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտները և քաղաքացիները պարտավոր են ապահովել՝

- ա) գյուղատնտեսական հողատեսքերի, ցանքերի և տնկարկների առավել վտանգավոր, այդ թվում կարանտինային հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի համալիր միջոցառումների իրականացումը.
- բ) հողում և բուսական ծագում ունեցող մթերքում թունանյութերի թույլատրելի մնացորդային առավելագույն քանակը չզերազանցելը.
- գ) կարանտինային ծառայության կողմից կարանտինային օբյեկտ հանդիսացող ներկրվող բույսերի, բուսական ծագում ունեցող մթերքի, տնկանյութերի, փոխադրամիջոցների և փայտեթանյութերի զննումն ու փորձազննումը:

8. Արգելվում է՝

- ա) հանրապետությունում օգտագործման համար անթույլատրելի թունանյութերի և կենսապատրաստուկների օգտագործումը.
- բ) մինչև 18 տարեկան, բժշկական քննություն չանցած անձանց և հղի կանանց ներգրավումը թունանյութերի հետ կատարվող աշխատանքներում.
- գ) ախտահանված սերմերի՝ որպես սնունդ, անասնակեր օգտագործումը.
- դ) հանրապետության կարանտինային դրություն հայտարարված տարածքներից առանց կարանտինային վկայագրի բույսերի, բուսական ծագում ունեցող մթերքի, սերմերի և տնկանյութի ներմուծումն ու արտահանումը:

Հաստատված է
22 կառավարության 1998 թվականի
մարտի 11-ի N 171 որոշմամբ

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոններով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության ոլորտում անասնապահական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների կողմից իրականացվող անասնապահության կանոնները:

2. Անասնապահական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներն ու քաղաքացիներն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոններով:

II. Կենդանիների վարակիչ հիվանդությունների տարածման կանխումն ու վերացումը

- 3. Տնտեսավարող սուբյեկտները և քաղաքացիները պարտավոր են՝
 - ա) տեղեկացնել համապատասխան անասնաբուժական ծառայությանը նոր կենդանիներ ձեռք բերելու մասին.
 - բ) օժանդակել կենդանիների (թռչունների, մորթատու գազանների, ձկների ու մեղուների) վարակիչ հիվանդությունների տարածումը կանխարգելող և այդ հիվանդությունները վերացնող միջոցառումների անցկացմանը.
 - գ) համապատասխան անասնաբուժական ծառայություն ներկայացնել կենդանիներին՝ զննման, ախտորոշիչ հետազոտման, կանխարգելիչ պատվաստման համար.
 - դ) անհապաղ տեղյակ պահել համապատասխան անասնաբուժական ծառայությանը կենդանիների հանկարծակի անկումների կամ միաժամանակյա զանգվածային հիվանդության բոլոր դեպքերի մասին.
 - ե) ժամանակին հավաքել և տեխնիկական օգտահանման կամ ոչնչացման ենթարկել կենդանիների դիակները.
 - զ) սահմանված ժամկետներում ապահովել անասնաշենքերի, կենդանական ծագում ունեցող մթերքի և հումքի պահպանման ու վերամշակման կառույցների ախտահանման, միջատազերծման և դերատիզացման աշխատանքները:

III. Մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պաշտպանությունը

4. Անասնապահական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին և քաղաքացիներին արգելվում է՝

- ա) սահմանված կարգով անասնաբուժասանիտարական փորձաքննության չենթարկված մսի, կենդանիների սպանդից

գոյացած մսային և այլ մթերքի, կաթի, կաթնամթերքի, ձվի ու անասնապահական այլ մթերքի սննդի նպատակով իրացումը.

- բ) անասնապահական թափոններով շրջապատի բնական միջավայրի աղտոտումը.
- գ) անթույլատրելի վայրերում անասնապահական մթերքի և հումքի իրացումը:

IV. Անասնապահության և տոհմային գործի վարումը

5. Անասնապահական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին և քաղաքացիներին արգելվում է՝

- ա) կենդանիներին խոշտանգելը, ծեծելը և այլ դաժան վերաբերմունքը.
- բ) հանրապետությունում շրջանացված ցեղերից գատ, այլ ցեղերի կենդանիների ներկրումը, բուծումն ու դրանց վաճառքը.
- գ) տոհմակայաններում անտրակ սերմի (սպերմայի) վաճառքն ու օգտագործումը.
- դ) գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման ծառայությունների մատուցումն այն անձանց կողմից, որոնք չունեն համապատասխան մասնագիտական որակավորում:

V. Անասնապահական մթերքի և հումքի արտադրությունը, փոխադրումը, պահպանությունն ու իրացումը

6. Անասնապահական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտները և քաղաքացիները պարտավոր են՝

- ա) այլ վայր փոխադրվող կենդանիներին (ներառյալ թռչունները, մորթատու գազանները, ձկները, մեղուները և այլն), կենդանական ծագում ունեցող մթերքը և հումքն ուղեկցելիս ունենալ անասնաբուժական վկայականներ.
- բ) շուկաներում իրացվող կենդանիների համար ունենալ համապատասխան անասնաբուժական փաստաթղթեր.
- գ) մթերման կետերում, շուկաներում կամ առևտրի այլ կետերում, պահեստավորման կամ վաճառքի համար ստացվող կենդանական ծագում ունեցող մթերքը և հումքը ներկայացնել անասնաբուժասանիտարական փորձաքննության.
- դ) բրուցելյոզ և տուբերկուլյոզ հիվանդությունների նկատմամբ դրական հակազդող կենդանիների, ինչպես նաև տուբերկուլյոզի նկատմամբ դրական հակազդող թռչունների սպանող կատարել մսի վերամշակման ձեռնարկություններում (հատուկ պայմաններում՝ սալիկապատված շինություններում՝ սառնարանային խցիկի առկայությամբ, ապահովված ջրով, կոյուղով, ուր աշխատանքից հետո կատարվում է ամենօրյա ընթացիկ ախտահանություն).

- ե) շուկաներ (այդ թվում՝ խանութներ և իրացման թույլատրելի վայրեր) վաճառքի համար բերված կաթը, կաթնամթերքը ներկայացնել պարտադիր անասնաբուժասանիտարական փորձաքննության.
- զ) մթերելիս ու առաքելիս կաշվե և մորթեհումքը ներկայացնել պարտադիր լաբորատոր հետազոտման սիբիրախտ հիվանդության ստուգման նպատակով:

7. Արգելվում է՝

- ա) 14 օրականից փոքր գյուղատնտեսական կենդանիների սպանող՝ մսի համար.
- բ) հիվանդության մեջ կասկածելի կենդանիների և թռչունների սպանող՝ մսի համար.
- գ) սիբիրախտի դեմ պատվաստված կամ բուժման ենթարկված կենդանիների սպանող պատվաստումից հետո 14 օրվա, իսկ դաբաղ հիվանդության դեմ պատվաստված կենդանիների սպանող 21 օրվա ընթացքում.
- դ) հարկադիր մորթված կենդանիների մսեղիքի օգտագործումն առանց անասնաբուժական լաբորատոր հետազոտման այն ենթարկելու.
- ե) անասնաբուժասանիտարական փորձաքննության չենթարկված կաթի և կաթնամթերքի իրացումը.
- զ) կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ անապահով բնակավայրերից ու տնտեսություններից ստացված կաթի և կաթնամթերքի օգտագործումն ու իրացումը:

VI. Անասնաբուժական դեղամիջոցների, ախտահանիչ նյութերի փոխադրումը, պահպանումը, օգտագործումը

8. Անասնապահության գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին և քաղաքացիներին արգելվում է օգտագործել և իրացնել դեղաբանական ձեռնարկում (ֆարմակոպեա) չգրանցված դեղամիջոցները, հատուկ կերային լրացակերերը, պատվաստամիջոցները և այլ կենսաբանական պատրաստուկներ կամ նորմատիվ փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանող պատրաստուկները:

VII. Կարանտինային հիվանդությունների և այլ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք վարակիչ հիվանդությունների ներթափանցման կանխարգելումը

9. Անասնապահական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին և քաղաքացիներին թույլատրվում է կենդանիներ, կենդանական ծագում ունեցող մթերք, հումք և անասնակեր ներմուծել ու արտահանել միայն Հայաստանի

Հանրապետության պետական սահմանի անցման կետերում համապատասխան անասնաբուժական փաստաթղթեր ներկայացնելու դեպքում:

10. Ներմուծվող կամ արտահանվող կենդանիների մոտ վարակիչ հիվանդություններ հայտնաբերելիս կատարվում է հիվանդ կենդանիների մեկուսացում, հիվանդության վերացում, տարածքի վարակազերծում:

Հաստատված է
ՀՀ կառավարության 1998 թվականի
մարտի 11-ի N 171 որոշմամբ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

I. Ընդհանուր դրույթներ

(Բաժինն ուժը կորցրել է 19.01.06 N 60-Ն)

II. Տրակտորների, ինքնագնաց շասսիների, տրակտորային կցանքների, պետական ու միասնական համարանիշների ապահովումը

(Բաժինն ուժը կորցրել է 19.01.06 N 60-Ն)

III. Գյուղատնտեսական տեխնիկան գրանցելը և հաշվառումից հանելը

(Բաժինն ուժը կորցրել է 19.01.06 N 60-Ն)

IV. Գյուղատնտեսական տեխնիկայի վարման իրավունքի փաստաթղթերը և տեխնիկական զննման կազմակերպումն ու անցկացումը

(Բաժինն ուժը կորցրել է 19.01.06 N 74-Ն)

V. Գյուղատնտեսական տեխնիկայի տեխնիկական վիճակը և շահագործումը

(Բաժինն ուժը կորցրել է 19.01.06 N 74-Ն)

(Կանոնները փոփ. 19.01.06 N 60-Ն, 19.01.06 N 74-Ն)

(2ն 1-ը ուժը կորցրել է 19.01.06 N 74-Ն)

2ն 1

(2ն 2-ը ուժը կորցրել է 19.01.06 N 74-Ն)

2ն 2

Հաստատված է
ՀՀ կառավարության 1998 թվականի
մարտի 11-ի N 171 որոշմամբ

Ա Ն Վ Ա Ն Ա Յ Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ԵՒ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

Առևտրական անվանումը	Ազդող նյութը	Պատրաստուկային ձևը

1	2	3
---	---	---

Միջատասպան - տղասպան պատրաստուկներ

<i>Ակտարա</i>	<i>տիամետոքսան</i>	<i>250 գ/կգ կլի</i>
<i>Ակտելլիկ (ֆոսֆեցիդ)</i>	<i>պիրիմիֆոսամեթիլ</i>	<i>500 գ/լ էլի</i>
<i>Անումետրին (բովիկուրտ, վիսմետրին)</i>	<i>պերմետրին</i>	<i>250 գ/լ էլի</i>
<i>Անտիո</i>	<i>ֆորմոտիոն</i>	<i>250 գ/լ էլի</i>
<i>Ապոլլո</i>	<i>կլոֆենտիզին</i>	<i>500 գ/լ կլի</i>
<i>Արրիվո (ցիմբուշ, ցիպերկիլ, բիպերոտ, ցիտկոր, շերպա)</i>	<i>ցիպերմետրին</i>	<i>250 գ/լ էլի</i>
<i>Բագուդին (դիազինոն)</i>	<i>դիազինոն</i>	<i>600 մլ/լ էլի, 100 գ/կգ հ., 600 մլ/լ ջէլի,</i>
<i>Բի - 58 նոր</i>	<i>դիմետոատ</i>	<i>380 գ/լ էլի</i>
<i>Բուլդոկ</i>	<i>բետացիֆլուտրին</i>	<i>25 գ/լ էլի</i>
<i>Վերտիմեկ</i>	<i>աբամեկտին</i>	<i>18 գ/լ էլի</i>
<i>Դանիսոլ</i>	<i>ֆենպրոպատրին</i>	<i>100 գ/լ կլի, էլի</i>
<i>Դեցիս</i>	<i>դելտամետրին</i>	<i>25 գ/լ էլի, կլի</i>
<i>Դիմիլին</i>	<i>դիֆլուբենզուրոն</i>	<i>250 գ/կգ թ. փ.</i>
<i>Դուրսբան</i>	<i>քլորպիրիֆոս</i>	<i>408 գ/լ էլի</i>
<i>Ինսեգար</i>	<i>ֆենօքսիկարբ</i>	<i>250 գ/կգ թ. փ.</i>
<i>Կարատե</i>	<i>լլամբդացիգալոտրին</i>	<i>50 գ/լ էլի</i>
<i>Կարբոֆոս</i>	<i>մալատիոն</i>	<i>500 գ/լ էլի</i>
<i>Կալիպսո</i>	<i>տիակլոպրիդ</i>	<i>480 գ/լ կլի</i>
<i>Կոնֆիդոր</i>	<i>իմիդոկլոպրիդ</i>	<i>200 գ/լ էլի</i>

<i>Լեբայցիդ</i>	<i>ֆենտիոն</i>	<i>500 գ/լ կիս</i>
<i>Մագտոքսին</i>	<i>մագնեզիումի ֆոսֆիդ</i>	<i>660 գ/կգ գ., հաբ.</i>
<i>Մավրիկ 2 F</i>	<i>ֆլյուվալինատ</i>	<i>223 գ/լ կիս</i>
<i>Մետաբրոմ 980</i>	<i>մեթիլ բրոմիդ</i>	<i>980 գ/կգ գազ</i>
<i>Մեթալդեհիդ</i>	<i>մեթալդեհիդ</i>	<i>50 գ/կգ հ.</i>
<i>Միտակ</i>	<i>ամիտրաց</i>	<i>200 գ/լ էիս</i>
<i>Նեորոն</i>	<i>բրոմպրոպիլատ</i>	<i>500 գ/լ էիս</i>
<i>Նիստրան</i>	<i>գեկսիտիազոկս</i>	<i>100 գ/կգ թ.փ., 50 գ/լ էիս</i>
<i>Նուրելլ-Ռ</i>	<i>քլորպիրիֆոս+ +ցիպերմետրին</i>	<i>500+50 գ/լ էիս</i>
<i>Օմայթ</i>	<i>պրոպարզիդ</i>	<i>300 գ/կգ թ.փ., 570 գ/լ էիս</i>
<i>Պեգաս</i>	<i>դիաֆենտիուրոն</i>	<i>250 գ/լ կիս</i>
<i>Պրեպարատ 30</i>	<i>նավթայուղեր</i>	<i>760 գ/կգ հյէ</i>
<i>Պրեստիժ</i>	<i>իմիդակլոպրիդ+ +պենսիտուրոն</i>	<i>290 գ/լ կիս</i>
<i>Ռիպկորդ</i>	<i>ցիպերմետրին</i>	<i>400 գ/լ էիս</i>
<i>Ծծումբ</i>	<i>ծծումբ</i>	<i>800 գ/կգ փ</i>
<i>Սանմայթ</i>	<i>պիրիդաբեն</i>	<i>200 գ/կգ թփ</i>
<i>Սումի-ալֆա</i>	<i>էսֆենվալերատ</i>	<i>50 գ/լ էիս</i>
<i>Սումիտիոն</i>	<i>ֆենիտրոտիոն</i>	<i>500 գ/լ էիս</i>
<i>Սումիցիդին</i>	<i>ֆենվալերատ</i>	<i>200 գ/լ էիս</i>
<i>Տալստար</i>	<i>բիֆենտրին</i>	<i>100 գ/լ էիս</i>
<i>Տաստակ</i>	<i>ալֆացիպերմետրին</i>	<i>100 գ/լ էիս</i>
<i>Ֆոզալոն (զոլոն)</i>	<i>ֆոզալոն</i>	<i>350 գ/լ էիս</i>

Տյուրի	զետացիպերմետրին	100 գ/լ ջէ
Տոստոքսին	այլումինի ֆոսֆիդ	560 գ/կգ հ
Տուֆանոն	մալատիոն	570 գ/լ էխ
Խոստակվիկ	խեպտենոֆոս	500 գ/լ էխ
Ոֆատոքս	պարատիոն մեթիլ	300 գ/կգ փ
Կենսաբանական միջատասպան պատրաստուկներ		
Ինսեկտին	<i>Bac.thur, var. insectus</i>	60 մլրդ.սպ/գ, ԿԱ-2000 ԱՍ/գ թփ
Ինսեկտին	<i>Bac.thur, var. insectus</i> էկզոտոկսին	30 մլրդ.սպր/գ, ԿԱ-1000 ԱՍ/գ թփ
Լեպիդոցիդ, խիտ	<i>Bac.thur, var. kurstaki</i>	100 մլրդ սպր/գ թփ
Բիտոքսիբացիլին	<i>Bac.thur, var. thuringiensis,</i>	ԿԱ-1500 ԱՍ/գ չփ
Բիտոքսիբացիլին	<i>Bac.thur, var. thuringiensis,</i> էկզոտոկսին	ԿԱ-2000 ԱՍ/գ թփ
Բովերին	<i>Beauveria bassiana</i> շտամ TC 92	2 մլրդ սպր/գ հեղուկ
Վերտիցիլին	<i>Verticillium lecanii</i> շտամ PY 4/1	2 մլրդ սպր/գ հեղուկ
Նեմատոդասպան պատրաստուկներ		
Վիդատ	օկսամիլ	100 գ/կգ հ
Մնկասպան պատրաստուկներ		
Ակրոբատ ՄՅ	դիմետոմորֆ+մանկոցեր	690 գ/կգ թփ
Ալտո	ցիպրոկոնազոլ	400 գ/լ կխ
Արցերիդ	մետալակսիլ+ +պոլիկարբացին	/70+530 գ/կգ/ թփ
Անտրակոլ	պրոպինեբ	700 գ/կգ/ թփ
Ատեմի հ	ծծումբ+ցիպրոկոնազոլ	/800+8գ/կգ/ ջլհ

<i>Բայլետոն</i>	<i>տրիադիմեֆոն</i>	<i>250 գ/կգ թփ</i>
<i>Ֆունդազոլ (բենլատ, բենումիլ)</i>	<i>բենումիլ</i>	<i>500 գ/կգ թփ</i>
<i>Վեկտրա</i>	<i>բրոմուկոնազոլ</i>	<i>100 գ/լ կխ</i>
<i>Դիտան Մ-45</i>	<i>մանկոցեր</i>	<i>800 գ/կգ թփ</i>
<i>Պրոնալ</i>	<i>պրոնալ սուլֆատ</i>	<i>980 գ/կգ լփ</i>
<i>Պրոնալ քլորիդ</i>	<i>պրոնալ քլորիդ</i>	<i>900 գ/կգ թփ</i>
<i>Կուպրոկսատ</i>	<i>պրոնալ եռհիմնային սուլֆատ</i>	<i>345 գ/կգ կխ</i>
<i>Միկալ պլյումբինի</i>	<i>ֆոսֆիլ+ ֆոսֆատ</i>	<i>/500+250 գ/կգ/ թփ</i>
<i>Սոսերեն</i>	<i>պենսիոնոն+կապտան</i>	<i>125+500 գ/կգ/ փ</i>
<i>Մելոդի դու</i>	<i>իմպրովալիկարբ+ պրոպիներ</i>	<i>670 գ/կգ թփ</i>
<i>Մելոդի կոմպակտ</i>	<i>իմպրովալիկարբ+ֆոսֆատ</i>	<i>435 գ/կգ թփ</i>
<i>Մելոդի կա</i>	<i>իմպրովալիկարբ+պրոնալ</i>	<i>392 գ/կգ թփ</i>
<i>Օքսիմոլ</i>	<i>պրոնալ քլորիդ+ օքսադիպիլ</i>	<i>700+100 գ/կգ թփ</i>
<i>Պրոնալ</i>	<i>պրոնալ քլորիդ+ պրոնալիդ</i>	<i>(200+600 գ/կգ) թփ</i>
<i>Ռիդոլ գոլդ ՄՅ-68</i>	<i>մետալակսիլ+մանկոցեր</i>	<i>80+640 գ/կգ թփ</i>
<i>Բմպակտ</i>	<i>ֆլուտրիաֆոլ</i>	<i>125 գ/լ կխ</i>
<i>Ծծումբ կոլորիդ</i>	<i>ծծումբ Սկոր դիֆենոկոնազոլ</i>	<i>250 գ/լ էխ</i>
<i>Տիլտ</i>	<i>պրոպիկոնազոլ</i>	<i>250 գ/լ էխ</i>
<i>Տիլտ</i>	<i>պրոպիկոնազոլ</i>	<i>375 գ/կգ թփ</i>
<i>Տոպագ</i>	<i>պենկոնազոլ</i>	<i>100 գ/լ էխ</i>
<i>Տուրարիդ</i>	<i>պրոնալ քլորիդ+ մետալակսիլ</i>	<i>500+100 գ/կգ թփ</i>
<i>Տրիկոլոր</i>	<i>տերուկոնազոլ</i>	<i>250 գ/լ էխ</i>

<i>Խորուս</i>	<i>ցիպրոդինիլ</i>	<i>750 գ/կգ ջղհ</i>
<i>Էուպարեն Մ</i>	<i>տոլիֆլուանիդ</i>	<i>500 գ/կգ թփ</i>
<i>Հորիզոն</i>	<i>տերուկոնազոլ</i>	<i>250 գ/լ կխ</i>
<i>Սնկասպան ախտահանիչներ</i>		
<i>Վիտավաքս 200</i>	<i>կարբոքսին+տիրամ</i>	<i>375+375 գ/կգ թփ</i>
<i>Վիտավաքս 200 ֆֆ</i>	<i>կարբոքսին+տիրամ</i>	<i>170+170 գ/լ ջկխ</i>
<i>Վիտատիրամ</i>	<i>կարբոքսին+տիրամ</i>	<i>500+300 գ/կգ թփ</i>
<i>Դիվիդենդ</i>	<i>դիֆենոկոնազոլ</i>	<i>30 գ/լ կխ</i>
<i>Ռաքսիլ</i>	<i>տերուկոնազոլ</i>	<i>60 գ/լ էխ</i>
<i>SUSՂ</i>	<i>տիրամ</i>	<i>800 գ/կգ թփ</i>
<i>Ֆենորամ</i>	<i>կարբոքսին+տիրամ</i>	<i>470+230 գ/կգ թփ</i>
<i>Ֆենորամ սուպեր</i>	<i>կարբոքսին+տիրամ</i>	<i>470+230 գ/կգ թփ</i>
<i>Մոլախոտասպան պատրաստուկներ</i>		
<i>2.4-Դ ամինային ադ</i>	<i>դիմեթիլ ամինային ադ</i>	<i>688 գ/լ ջլ</i>
<i>2.4-Դ 500 ամինային ադ</i>	<i>դիմեթիլ ամինային ադ</i>	<i>500 գ/լ ջլ</i>
<i>Ալիոքս</i>	<i>Է ՊՏՅ+անտիդոտ</i>	<i>720 գ/լ էխ</i>
<i>Բանվել</i>	<i>դիկամբա /դիմեթիլ ամինային ադ/</i>	<i>480 գ/լ ջլ</i>
<i>Բազագրան</i>	<i>բենտազոն</i>	<i>480 գ/լ ջլ</i>
<i>Բազագրան Մ</i>	<i>բենտազոն+ՍՅՊԱ /դիմեթիլ ամինային ադ/</i>	<i>250+125 գ/լ ջլ</i>
<i>Բաստա</i>	<i>ամոնիումի գլյուֆոսինատ</i>	<i>200 գ/լ ջլ</i>
<i>Բետանալ ԱՄ</i>	<i>դեսմիդիֆամ</i>	<i>175 գ/լ էխ</i>
<i>Բյուկտրիլ Դ</i>	<i>բրոմօքսինիլ+2,4 Դ</i>	<i>225+225 գ/լ էխ</i>

Գեղազարդ-50	պրումետրին	500 գ/կգ թփ
Գլխուլ	գլիֆոսատ /իզոպրոպիլամինային աղ/	360 գ/լ ջլ
Գրանստար	տրիբենուրոն մեթիլ	750 գ/կգ չհկ
Դեզորմոն	2.4-Դ/դիմեթիլ ամինային աղ	600 գ/լ ջլ
Դիալեն	2.4 Դ+դիկամբա	342 գ/լ+34.2 գ/լ ջլ
Բուտիզան U	մետազաքլոր	500 գ/լ կխ
Կլինի	գլիֆոսատ	360 գ/լ ջլ
Զելեկ-սուպեր	գալօքսիֆոպ-Ը- էտոքսիմեթիլ /եթեր/	104 գ/լ էխ
Զենկոր	մետրիբուզին	700 գ/կգ թփ
Իզրան	տերբուտրին	500 գ/կգ թփ
Կվարց-սուպեր	իզոպրոտուրոն+դիֆլյուֆենիկան	500+50 գ/լ ջսխ
Լենտագրան	պիրիդատ	600 գ/լ էխ
Լոնտրել-300	կլոպիրալիդ	300 գ/լ ջլ
Պարդներ	բրոմօքսինիլ /եթերի օքտանոատ/	225 գ/լ էխ
Պիրամին	քլորիդազոն	650 գ/կգ թփ
Պրիմէքստրա	մեթոլաքլոր+ ատրազին	330+170 գ/լ կխ
Պումա-սուպեր 100	ֆենօքսապրոպ+Պ-էթիլ+ անտիդոտ	100+27 գ/լ էխ
Ռատունդապ	գլիֆոսատ /իզոպրոպիլ ամինային աղ/	360 գ/լ ջլ
Ռեզլոն	դիկվատ	150 գ/լ ջլ
Ռոնիտ 6-է	ցիկլոնատ	720 գ/լ էխ
Սեմերոն	դեսամետրին	250 գ/կգ թփ
Ստարանէ	ֆլուրոկսիպիր	200 գ/լ էխ

<i>Մտումս</i>	<i>պենդիմեթալին</i>	<i>330 գ/լ էխ</i>
<i>Տարգա-սուպեր</i>	<i>խիզալոֆոսպ-Ք-էթիլ</i>	<i>54,6 գ/լ էխ</i>
<i>Տոպիկ</i>	<i>կլոդինաֆոսպ- պրոպարզիլ+անտիդոտ</i>	<i>80+20 գ/լ էխ</i>
<i>Տոպոգարդ</i>	<i>տերբուտրին+ +տերբուտիլազին</i>	<i>350+150 գ/կգ թփ</i>
<i>Տոտրիլ</i>	<i>իօքսինիլ /էթերի օքտանոատ/</i>	<i>225 գ/լ էխ</i>
<i>Տրեֆլան</i>	<i>տրեֆլուրալին</i>	<i>240 գ/լ էխ</i>
<i>Ֆենագոն</i>	<i>2.4 դիքլոր քուտիլային էսթեր</i>	<i>420 գ/լ էխ</i>
<i>Ֆյուզիլադսուպեր</i>	<i>ֆենոկսապրոքրուտիլ</i>	<i>125 գ/լ էխ</i>
<i>Հարնես</i>	<i>ացետոքլոր</i>	<i>900 գ/լ էխ</i>
<i>Էրադիկան 6 է</i>	<i>ԷՊՏՅ+անտիդոտ</i>	<i>720 գ/լ էխ</i>

Մկնասպան պատրաստուկներ

<i>Գլիֆոտր</i>	<i>1-3 դիֆոտր պրոպանոլ-2</i>	<i>720 մլ/լ տ</i>
<i>Կլերատ</i>	<i>բրոդիֆակում</i>	<i>0.05 գ/կգ հ</i>
<i>Շտորմ Բ</i>	<i>ֆլուկումաֆեն</i>	<i>0.05 գ/կգ ք</i>
<i>Ցինկի ֆոսֆիդ</i>	<i>Ցինկի ֆոսֆիդ</i>	<i>20% տ. փ.</i>
<i>Բակտոքոդենցիդ</i>	<i>Salmonella հատիկային enteritidis, var., Tssatchenko, <Ղ>խումբ</i>	<i>տիտր 1 միլ/գ</i>

Ծանոթություն

<i>էխ - էմուլսիոն խտություն</i>	<i>փ. - փոշի</i>	<i>ջկխ - ջրակախության խտություն</i>
<i>կխ - կախության խտություն</i>	<i>ջ.լ.հ. - ջրում լուծվող</i>	<i>ջ.լ.խ. - ջրում լուծվող խտություն</i>
<i>հ - հատիկավորված</i>	<i>հատիկավորված լ.փ. - լուծվող փոշի</i>	<i>հ.լ.է. - հատիկավորված լուծվող էմուլսիա</i>

թ. փ. - թրջվող փռշի

ջ. դ. հ. - ջրադիսպերսիոն հատիկավորված

կա - կենսաբանական
ակտիվություն

չ. փ. - չոր փռշի

ջ. լ. - ջրային լուծույթ

ԱՄ - ակտիվության
միավոր

տ - տեխնիկական

չհկ - չոր հոսուն կախույթ

(Անվանացանկը խմբ. 30.09.00 N 608)

Հաստատված է
ՀՀ կառավարության 1998 թվականի
մարտի 11-ի N 171 որոշմամբ

Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ա Ն Կ

Հայաստանի Հանրապետության համար կարանտինային նշանակություն ունեցող բույսերի
վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի

1. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված

ա) բույսերի վնասատուներ

1. Նարնջենու վահանակիր
2. Սպիտակ երիզավոր բզեզ
3. Արքայանարնջի մեծ ճանճ
4. Արնեյան կամ ասիական տերևալվիճ
5. Արնեյան ալրացող որդան
6. Արնեյան կիտրոնային վահանակիր
7. Բամբակենու եգիպտական սովկա
8. Թզենու մոմային կեղծ վահանակիր
9. Չինական հատիկակեր
10. Երեքնուկի ականող
11. Միջերկրածովային պտղաճանճ
12. Տրոգոդերմա անգուստում
13. Տրոգոդերմա բալֆինխուս
14. Տրոգոդերմա լոնգիսետոգում
15. Տրոգոդերմա Գրասսմանի
16. Տրոգոդերմա օրնատուն
17. Տրոգոդերմա սիմպլեքս
18. Տրոգոդերմա ստերնալե
19. Բամբակենու ցեց
20. Կիտրոնենու ականող ցեց
21. Կիտրոնի սև ճերմակաթնիկ
22. Ամբարային լայնակնճիթ երկարաթիկ
23. Խնձորենու ճանճ

բ) բույսերի հիվանդություններ

Ս նկային

24. Բամբակենու անտրաքնոզ
25. Ցորենի հնդկական մրիկ

26. Տեխնայան արմատային փտում

Վիրուսային

- 27. Մալորի գծային նախդեր (ամերիկյան)
- 28. Դեղձի մոզաիկա (ամերիկյան)
- 29. Կիտրոնենիների տրիստեցա

Բակտերիալ

- 30. Եզիպտացորենի բակտերիալ թառամում
- 31. Մեխակի վիլտ
- 32. Հակինթի դեղին հիվանդություն
- 33. Ցորենի դեղին լորձային բակտերիոզ
- 34. Կիտրոնենիների քաղցկեղ

Նեմատոդային

- 35. Կարտոֆիլի դժգույն նեմատոդա

զ) մոլախոտեր

- 36. Թանթրվենու խնդեղի (կամ) խնդեղենի
- 37. Գծատերևային մորմ
- 38. Կալիֆոռնիական արևածաղիկ
- 39. Թարթիչավոր արևածաղիկ
- 40. Շրեշավոր արևածաղիկ
- 41. Անհարթ արևածաղիկ
- 42. Ստրիգաներ (բոլոր տեսակները)

2. Հայաստանի Հանրապետությունում սահմանափակ տարածված

ա) բույսերի վնասատուներ

- 1. Արևելյան պտղակեր
- 2. Կալիֆոռնիական վահանակիր
- 3. Կարտոֆիլի կոլորադյան բզեզ
- 4. Ֆիլոքսերա
- 5. Կիտրոնային ճերմակաթևիկ
- 6. Կոմստոկի որդան

բ) բույսերի հիվանդություններ

- 7. Կարտոֆիլի քաղցկեղ
- 8. Պտղատու ծառերի բակտերիալ այրվածք
- 9. Կարտոֆիլի ոսկեփայլ նեմատոդա

գ) մոլախոտեր

- 10. Սողացող դառնախոտ
- 11. Գաղձեր
- 12. Տզկանեփ

ԱՊՀ անդամ պետություններում սահմանափակ տարածված

ա) բույսերի վնասատուներ

- 1. Բամբակենու ասիական սովկա

2. Ամերիկյան ճերմակաթիթեռ
3. Ավստրալիական ճռիկավոր որդան
4. Տանձենու հրաթիթեռ
5. Կարտոֆիլի ցեց
6. Հատիկային տրոզոդերմա
7. Դեղձենու պտղակեր
8. Թթենու վահանակիր
9. Բամբակենու ճերմակաթևիկ
10. Կիտրոնի այրացող որդան
11. Քառաբիծ ընդակեր
12. Խնձորենու ոսկեբզեզ
13. Ճապոնական բզեզ
14. Ճապոնական մոմային կեղծ վահանակիր
15. Ճապոնական փայտաձև վահանակիր

բ) բույսերի հիվանդություններ

Մնկային

16. Ոսկեծաղկի (քրիզանթեմ) ասկոխիտոզ
17. Ոսկեծաղկի սպիտակ ժանգ
18. Վուշի պասմո
19. Եգիպտացորենի հարավային հելմինտոսպորիոզ

Վիրուսային

20. Խաղողի վազի ոսկեփայլ դեղնում
21. Օսպա (շարկա) սալորի, դեղձի, ծիրանի

գ) մոլախոտեր

22. Օշինդրատերևային ամրոս
23. Եռաբաժին ամրոս
24. Բազմամյա ամրոս
25. Փշոտ մորմ
26. Եռածաղկային մորմ
27. Կարոլինային մորմ
28. Տատաշային ցենխրուս
29. Եղեսպակ նշտարաձև

3. Հայաստանի Հանրապետության համար պոտենցիալ վտանգավոր*

ա) բույսերի վնասատուներ

Կեղծ կեղևակերներ

1. Ատամնավոր կնգուղավորիկ
2. Շատակեր կեղծ ատամնակեր

Հատիկակերներ

3. Գետնանուշի հատիկակեր
4. Ընդավորների բրազիլական հատիկակեր
5. Ոլոթի եգիպտական հատիկակեր
6. Ընդավոր մշակաբույսերի հատիկակեր

բ) բույսերի հիվանդություններ

Մնկային

7. Անդյան ֆոնոգ
8. Կարտոֆիլի պալարների մրիկ
9. Եգիպտացորենի դիպլոդիոգ
10. Սոյայի ցերկոսպորոգ
11. Սոյայի ցողունների քաղցկեղ
12. Խաղողի վազի թառամում
13. Մեխակի ֆիլոֆորա
14. Արևածաղկի ցողունի բծավորություն

Վիրուսային

15. Կարտոֆիլի անդյան վիրուս
16. Ելակի պառավի ցախավել
17. Վարդի վիլտ
18. Կարտոֆիլի դեղին գաճաճություն
19. Դեղձենու դեղնախտ (միկոպլազմա)
20. Ոսկեծաղկի գաճաճություն
21. Լոլիկի շրջանակաձև գծավորություն
22. Ելակի ծածուկ վիրուս «Ս»
23. Կեռասենու ժանգային նեկրոտիկ խայտուցավորության
24. Ելակի ջղերի երիզավորում
25. Կեռասենու տերևների թորբուածություն (ամերիկյան)
26. Մորենու տերևների ոլորում
27. Դեղձենու ֆոնի
28. Ծիրանենու տերևների քլորոտիկ ոլորում
29. Գարու նրբագծիկավոր մոզաիկա

Բակտերիալ

30. Բրնձի բակտերիալ այրվածք
31. Բրնձի բակտերիալ շերտավորություն
32. Խաղողի բակտերիալ թառամում

Նեմատոդային

33. Կեղծ գալային նեմատոդա
34. Բայոցային կամ գայլիկոնոդ նեմատոդա

զ) մոլախոտեր

35. Հնդկական էպինոմենե
36. Վիրջինյան էպինոմենե
37. Երկփետրային կատվալեզու
38. Սոնակային դիոդիա
39. Ավստրալական էմեկս
40. Փշոտ էմեկս
41. Եզրագարդաձև իշակաթնուկ
42. Ատամնաձև իշակաթնուկ
43. Պատատուկային իպոմեա
44. Փենսիլվանական հավտենի
45. Երկտակված ռայմանիա
46. Խոշորապտուղ սեսբանյա
47. Անկյունավոր սիցիոս
48. Փշոտ կատվաբուն

(Անվանացանկը լրաց. 25.09.03 N 1224-Ն)

*Հաստատված է
ՀՀ կառավարության 1998 թվականի
մարտի 11-ի N 171 որոշմամբ*

Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ա Ն Կ

Կարանտինային անվտանգության ապահովման նպատակով կարգավորվող առարկաների (կարանտինի օբյեկտ) բույսերի, բուսական արտադրանքի, բեռնարկղի, փաթեթավորման և այլ նյութերի
(Վերնագիրը խմբ. 07.02.01 N 89)

Ծածկագիրը	Անվանումը	Հետազոտման եղանակը
1	2	3
0601	1. Գյուղատնտեսական, անտառային և դեկորատիվ մշակաբույսերի սերմեր և տնկանյութ՝ սոխուկներ, պալարներ, արմատապալարներ, կտրոններ, անդալիսներ, սածիլներ	լաբորատոր
0602	ծառեր ու թփեր (անտառային, պտղատու, դեկորատիվ և այլն)	լաբորատոր
0602	տնկիներ, սածիլներ, բույսերի կենդանի արմատներ, առանց արմատի տնկիներ, պատվաստացումներ, ճյուղեր, բեղիկներ և ընձյուղներ	լաբորատոր
0602	սնկամարմիններ (միցելիաներ) այդ թվում՝ հողով և բուսական նյութերով	լաբորատոր
0603	թարմ, չոր կտրած ծաղիկներ և կոկոններ	լաբորատոր
0603	տերևներ, ճյուղեր և բույսի այլ մասեր՝ առանց ծաղիկների և կոկոնների	լաբորատոր
0604	ծառերի թփերի կտրված ճյուղեր՝ ծաղիկներով և կոկոններով	լաբորատոր
0604	խոտեր, մամուռներ և քարաքոսեր	լաբորատոր
0604	բնական եղևնիներ (սղոցած)	լաբորատոր
070110	սերմացու կարտոֆիլ	լաբորատոր
070310110	սերմացու գլուխ սոխ	լաբորատոր
071290110	սերմացու եգիպտացորեն	լաբորատոր

07310110	սերմացու ոլոռ	լաբորատոր
071320100	սերմացու սիսեռ	լաբորատոր
071331100	սերմացու լոբի	լաբորատոր
071340100	սերմացու ոսպ	լաբորատոր
071350100	սերմացու կերային լոբի և այլ ընդդեմներ	լաբորատոր
100110100	սերմացու ցորեն	լաբորատոր
100190100	սերմացու գարի լաբորատոր	
100300100	սերմացու գարի	լաբորատոր
100400100	սերմացու վարսակ	լաբորատոր
100510	սերմացու եգիպտացորեն	լաբորատոր
100810100	սերմացու բրինձ	լաբորատոր
100700000	սերմացու սորգո	լաբորատոր
120100100	սերմացու սոյա	լաբորատոր
120210100	սերմացու գետնընկույզ	լաբորատոր
120400100	սերմացու վուշ	լաբորատոր
120500100	սերմացու կանճրակ	լաբորատոր
120600100	սերմացու արևածաղիկ	լաբորատոր
1207	սերմեր և պտուղներ այլ կուլտուրաների	լաբորատոր
1209	այլ սերմեր (ճակնդեղի, առվույտի, երեքնուկի, շյուղախոտի, մարգագետնային դաշտավուկի, ոլոռնախոտի, մարգագետնային սիգախոտի, բանջարանոցային մշակաբույսերի և անտառային ծառատեսակների)	լաբորատոր

2. Թարմ և չոր պտուղներ ու բանջարեղեններ

070190,0712	կարտոֆիլ	լաբորատոր
-------------	----------	-----------

0702,0712	լուիկ	լաբորատոր
070310190	գլուխ սոխ, սոխ-շալոտ, սոխ-պրաս	լաբորատոր
070320000 070390000	և այլ սոխանման բանջարեղեններ	լաբորատոր
0704	գլուխ կաղամբ, ծաղկակաղամբ, կոլրաբի և այլն	վիզուալ
0705	սալաթ-կաթնուկ և ճարճատուկ	վիզուալ
0706	գագար, շաղգամ, սեղանի ճակնդեղ, բողկ և այլ արմատապտուղներ	վիզուալ
0707	վարունգ և կորնիշոն	վիզուալ
0708,0713	ընդավոր բանջարեղեններ	վիզուալ
0709	այլ թարմ բանջարեղեններ (ծներեկ, բադրիջան, նեխուր, սնկեր և գետնասնկեր, տաքդեղ, մասուր, քաղցր եգիպտացորեն՝ հասկերով կամ հատիկներով, դդում, դդմիկ, ձիթապտուղ, խորոմսամիթ, կապար, թրթնջուկ և այլն)	վիզուալ
0712	այլ չորացած բանջարեղեններ	վիզուալ
071420100	բատատ	վիզուալ
0801	կոկոսյան ընկույզ, կեշյու	վիզուալ
0802	ընկույզներ (նուշ, անտառային, հունական, շագանակներ, գետնանուշեր)	վիզուալ
0803	բանաններ	վիզուալ և լաբորատոր
0804	խուրմաներ, թուզ, արքայախնձորներ, ավոկադո, գույավա, մանգո	լաբորատոր
0805	ցիտրուսային պտուղներ	լաբորատոր
0806	խաղող	լաբորատոր
0807	սեխ, ձմերուկ, պապայա	վիզուալ
0808	խնձոր, տանձ և սերկևիլ	վիզուալ

0809	ծիրան, բալ, կեռաս, դեղձ, սալոր	վիզուալ
0810 0813	այլ պտուղներ (գետնամորի, ազնվամորի, մոշ, հաղարջ, կոկոռշ, կիվի, լոռամրգի և այլն)	վիզուալ
121291	չորացած պտուղներ՝ ծիրան, սև սալոր, խնձոր, դեղձ, տանձ, ընկույզ կամ չոր պտուղների խառնուրդ	վիզուալ
121292	շաքարի ճակնդեղ և շաքարեղեգ	վիզուալ

3. Պարենային, ֆուրաժային և տեխնիկական հացահատիկ, կոպրա, սոլոդ (գարեջրի ածիկ), դեղագործական և բուսական հումք ու բուսական ծագում ունեցող այլ մթերք

1001	ցորեն	լաբորատոր
1002	տարեկան	լաբորատոր
1003	գարի	լաբորատոր
1004	վարսակ	լաբորատոր
1005	եգիպտացորեն	լաբորատոր
1006	բրինձ	լաբորատոր
1007	հացահատիկային սորգո	լաբորատոր
1008	հնդկացորեն և այլ հացահատիկներ	լաբորատոր
1107	գարեջրի ածիկ	լաբորատոր
1201	սոյա	լաբորատոր
1208	ալյուր և քուսպ՝ ստացված յուղատու մշակաբույսերի սերմերից և պտուղներից	լաբորատոր
1210	գայլուկի կոներ՝ թարմ կամ չոր բույսերը,	վիզուալ,
1211	նրանց առանձին մասերը, ներառյալ սերմերը և	վիզուալ
1212	և պտուղները, որոնք օգտագործվում են պարֆյումերիայում դեղագործական, ինսեկտիցիդ, ֆունգիցիդ նպատակներով (թարմ կամ չոր եղջերենու ծառի ունդեր, ծովային և այլ ջրիմուռներ, պտուղների կորիզներ, բուսական ծագում ունեցող այլ մթերք)	լաբորատոր

1213	ծղոս	վիզուալ, վիզուալ և լաբորատոր
1214	խոտ, առվույտ, երեքնուկ, կորնգան, կերային ճակնդեղ, լյուպին, վիկ, գոնգեղ և այլ համանման կերեր	վիզուալ, վիզուալ և լաբորատոր
1401	բուսական ծագում ունեցող նյութեր (բամբուկ, եղեգ, ուռենի, ռաֆիա) վիզուալ	վիզուալ, վիզուալ և լաբորատոր
1402	բուսական ծագում ունեցող նյութեր, որոնք օգտագործվում են լցման համար	վիզուալ, վիզուալ և լաբորատոր
1403	բուսական ծագում ունեցող նյութեր, որոնք հիմնականում օգտագործվում են խոզանակավոր ապրանքների և ավելների արտադրության համար	վիզուալ, վիզուալ և լաբորատոր
1404	բուսական ծագում ունեցող նյութեր, որոնք օգտագործվում են ներկման դաբաղման համար (բուսական սպունգ, քարաքոսեր, սանրափուշ, օճառենու արմատներ և այլն)	վիզուալ, վիզուալ և լաբորատոր
210220	մահացած միաբջիջ օրգանիզմներ (բակտերիաներ և միաբջիջ ջրիմուռներ, որոնք օգտագործվում են որպես անասնակեր	վիզուալ և լաբորատոր
2302	թեփ, մաղվածքներ և այլ մնացորդներ, ինչպես նաև հացահատիկային և ընդավոր մշակաբույսերի աղալուց հետո ստացված թափոններ	վիզուալ
2304	քուսպ և այլ կարծր մնացորդներ, որոնք ստացվել են սոյայի յուղի լուծազատումից	
2305	քուսպ և այլ կարծր մնացորդներ, որոնք ստացվել են գետնընկույզի յուղի լուծազատումից	
2306	քուսպ և այլ կարծր մնացորդներ, որոնք ստացվել են վուշի, արևածաղկի սերմերի, կոկոսյան ընկույզի կամ կեղևի, բամբակի, քունջութի և ձիթապտղի սերմերի լուծազատումից	
2308	բուսական ծագում ունեցող մթերք, բուսական թափուկներ, մնացորդներ և կողմնակի մթերք, որոնք օգտագործվում են որպես անասնակեր	վիզուալ
3101	բուսական ծագում ունեցող պարարտանյութեր, կեղտոտված բրդի մնացորդներ, գոմաղբ, որոնք պիտանի չեն այլ նպատակներով օգտագործվելու, բացառությամբ որպես պարարտանյութ	վիզուալ
3101	կոմպոստ (բաղադրյալ պարարտանյութ)	վիզուալ
3101	որդի մաքրումից ստացված մնացորդներ և թափոններ	վիզուալ

4101	խոշոր եղջերավոր անասունների մորթիներ, որոնցից չի անջատվում նրբակաշին	վիզուալ
4102	ոչխարների և գառների չղաբաղված մորթիներ, որոնք չեն օգտագործվում որպես մազաղաթ	վիզուալ
4103	կաշվե հումքի այլ տեսակներ (չղաբաղված, մազաղաթի համար չառանձնացված)	վիզուալ
4110	բնական և արհեստական կաշվի կտրտվածքներ և այլ մնացորդներ	վիզուալ
5101	բուրդ, որը ենթակա չէ սանդերքագզման և սանրման	վիզուալ
5102	կենդանիների նուրբ և կոշտ մազեր, որոնք ենթակա չեն սանդերքագզման կամ սանրման	վիզուալ
5103	նուրբ կամ կոշտ մազավոր կենդանիների բրդի մնացորդներ	վիզուալ
5201	բամբակի չսանրված թելեր	վիզուալ
5202	բամբակի մնացորդներ	վիզուալ
5203	բամբակի սանրված թելեր	վիզուալ
5301	վուշի մշակված կամ չմշակված թելեր և այլ թափոններ	վիզուալ

4. Կեղևահանված բրինձ, ալյուր, ձավար, սուրճի հատիկ, կակաոյի ունդեր, ծխախոտի հումք և համեմունքներ

0901	սուրճի հատիկ, թեյ	լաբորատոր
0904	տաքդեղ՝ չորացած, ջարդած կամ աղացած	լաբորատոր
0905	վանիլին	լաբորատոր
0906	դարչին	լաբորատոր
0907	մեխակ	լաբորատոր
0908	մշկընկույզ (մուսկատ)	լաբորատոր
0909	անիսի, խորոմսամիթի, համեմի, քեմոնի սերմեր	լաբորատոր
0910	իմբիր, քրքում, ուրց, դափնետերև և այլ համեմունքներ	լաբորատոր

100630	կեղևահանված բրինձ	լաբորատոր
1101	ցորենի կամ այլ հացահատիկի այլուր	լաբորատոր
1102	տարեկանի, եգիպտացորենի, բրնձի, գարու, վարսակի այլուր և այլն	լաբորատոր
1103	ձավարեղեն	լաբորատոր
1104	հացահատիկ՝ այլ եղանակներով վերամշակված (թեփահանված, տափակեցված դարմանի կամ ջարդվածքի ձևով)	լաբորատոր
1106	այլուր և ձավար՝ ստացված չոր ընդավոր մշակաբույսերից, բանջարեղենից, արմավենու միջուկից, արմատապտուղներից	վիզուալ
1105	կարտոֆիլի այլուր	վիզուալ
1801	կակաոյի ունդեր	վիզուալ
1801	ծխախոտի հումք	վիզուալ

5. Հարուցիչներ հանդիսացող կենդանի սնկակիր, բակտերիակիր, վիրուսակիր, նեմատոդակիր, տզավոր և միջատավոր մշակաբույսեր

3002	բուսական ծագում ունեցող վիրուսներ	լաբորատոր
3321	պատրաստի միջավայրեր միկրոօրգանիզմների աճեցման համար	լաբորատոր
010600990	կենդանի միջատներ	լաբորատոր

6. Միջատների, բույսերի հիվանդությունների հարուցիչների հավաքածուներ, սերմերի և բույսերի հերբարիումներ ու հավաքածուներ

9705	որևէ տեսակի պատկանող մահացած օրգանիզմներ, կենդանիներ, պահածոյացված չոր կամ հեղուկ միջավայրում, ինչպես նաև կենդանիների խրտվիլակներ՝ հավաքածուների համար	վիզուալ
9705	միջատներ տուփերում	վիզուալ
9705	սերմեր և բույսեր՝ չոր կամ պահածոյացված	
	հեղուկներում, հերբարիումներ	վիզուալ

7. Տարա (ապրանքափաթեթ), փայտանյութ, վառելափայտ, տաշեղներ կամ փայտանյութի այլ թափոններ

- 4401 վառելափայտ՝ գերանների, քոթուկների, ոստերի, չրփիների խրձերի կամ այլ նմանատիպ ձևերով. փայտե տաշեղներ կամ ռանդատաշեղներ, փայտի թեփ կամ թափոններ և կտորտանք, շեղաքարացված (ազլումերացված) կամ չշեղաքարացված գերանների, բրիկետների, հատիկների (գրանուլներ) կամ այլ նմանատիպ ձևերով վիզուալ
- 4403 չմշակված անտառանյութ՝ արմատներով կամ առանց արմատների. սևացրած կամ չսևացրած չորսուներ վիզուալ
- 4404 տակառագործական փայտանյութ, կտրտված գերաններ. փայտե հենացցեր կամ ցցեր՝ սրված, բայց երկայնակի չսղոցված, ռանդած, բայց չսրված, չճկված կամ այլ ձևերով չմշակված՝ ձեռնափայտերի, հովանոցների, գործիքների բռնակների և այլ նմանատիպ սարքերի պատրաստման համար. կեղևահանված կամ այլ նմանատիպ բնափայտ վիզուալ
- 44050000 փայտե բուրդ, փայտալյուր վիզուալ
- 4406 երկաթուղային և տրամվայի գծերի փայտակոճեր վիզուալ
- 4407 անտառանյութ՝ երկայնակի սղոցված կամ կտրտված, ռանդած կամ կեղևահանված, տաշված կամ չտաշված, հղկված կամ չհղկված, սեպային միացումներով կամ առանց միացման՝ 6 միլիմետրից հաստ վիզուալ
- 4408 միաշերտ նրբատախտակի թերթեր կամ միաշերտ նրբատախտակ (սոսնձված կամ չսոսնձված շպոն)՝ սոսնձված նրբատախտակի համար, և այլ փայտանյութ՝ երկայնակի կտրտված, մասերի բաժանված կամ կեղևահանված, ռանդած կամ չռանդած, հարթեցված կամ չհարթեցված, սեպային միացումներով կամ առանց միացումների՝ 6 միլիմետրից բարակ վիզուալ
- 4409 սղոցանյութեր (ներառյալ մանրահատակի պատրաստման համար չհավաքված ծոփորները և շերտաձողերը)՝ ձևավորված (սանդերքաձև, փոսիկներով, ազուցված, հարթեցված եզրերով, կիսաշրջանաձև միացված նախշառանդվածքի տեսքով, ձևավոր, կլորացված և նմանաձև)՝ ցանկացած եզրով կամ հարթությամբ, ռանդած կամ չռանդած, հարթեցված կամ չհարթեցված, սեպային միացումներով կամ առանց միացման վիզուալ
- 4410 փայտատաշեղային կամ համանման սալեր՝ պատրաստված բնափայտից կամ այլ փայտացած նյութերից, ձյութերով կամ այլ օրգանական կապակցող նյութերով ներծծված կամ չներծծված վիզուալ
- 4411 փայտե նրբաթելային սալեր՝ պատրաստված բնափայտից կամ այլ փայտացած նյութերից, ձյութի կամ այլ օրգանական կապակցող նյութերի ավելացմամբ կամ առանց ավելացման վիզուալ
- 4412 սոսնձված նրբատախտակ, նրբատախտակային փայտե պանելներ շերտավոր բնափայտից պատրաստված համանման նյութեր վիզուալ
- 44130000 մամլված բնափայտ՝ բլոկների, սալերի, չորսուների կամ որոշակի տեսքով արտադրանքի և այլ նմանատիպ ձևերով վիզուալ
- 441400 փայտե արկղեր, տուփեր, փաթեթավորման զամբյուղներ, թմբուկներ և համանման ապրանքափաթեթներ. փայտե թմբուկներ (մալուխների (կաբել) համար), կրկնատակեր, եզրավոր կրկնատակեր և այլ փայտե բեռնաբարձման վահանիկներ, փայտե ոլորուկներ, որոնք օգտագործվում են արկղերի կրկնատախտակի ձևավորման համար վիզուալ

4501	բնական խցան՝ չմշակված կամ առաջնային մշակման ենթարկված. խցանի թափոններ. մանրացված, հատիկավորված կամ աղացած խցան	վիզուալ
450200000	բնական խցան՝ արտաքին շերտը հեռացված կամ հիմնավոր կտրտված կամ ուղղանկյունու (ներառյալ քառակուսին) տեսքով բլոկներ, սալիկներ կամ շերտեր (ներառյալ չկլորացված եզրեր ունեցող խցանների արտադրության համար նախապատրաստվածքները)	վիզուալ
4503	բնական խցանից պատրաստված արտադրանք	վիզուալ
4601	ծղոտից կամ համանման այլ նյութերից պատրաստված հյուսվածքներ և հյուսման համար նախատեսված նմանատիպ ապրանքներ՝ միացված կամ չմիացված շերտերով, հյուսվածքանյութեր, հյուսվածքներ և հյուսման համար նախատեսված արտադրանք՝ հյուսման նյութերից՝ զուգահեռ փնջերով կապված կամ թերթերի ձևով գործված, ավարտված կամ չավարտված արտադրանք (գորգիկներ, խսիրներ, շերտավարագույրներ)	վիզուալ
4804	ամրաթուղթ և ոչ կավճապատ ստվարաթուղթ՝ գլանափաթեթներով կամ թերթերով, բացի 4802 և 4803 ծածկագրերում նշվածներից	վիզուալ
4819	թղթից, ստվարաթղթից, թաղանթանյութային բամբակից կամ թաղանթանյութային հյուսվածքաթելից ստացված պաստառից պատրաստված արկղեր, տուփեր, պարկեր, պայուսակներ և այլ ապրանքափաթեթներ, թղթապանակներ, տեփուրներ՝ նամակների համար, թղթից ու ստվարաթղթից պատրաստված այլ նմանատիպ արտադրանք, որոնք օգտագործվում են հաստատություններում, խանութներում կամ նմանատիպ նպատակներով	վիզուալ
4823	թուղթ, ստվարաթուղթ, թաղանթանյութային բամբակ ու թաղանթանյութային հյուսվածքաթելից պատրաստված պաստառներ և այլն՝ կտրտված ըստ չափսերի կամ ձևի, թղթե զանգվածից, թղթից, ստվարաթղթից, թաղանթանյութային բամբակից պատրաստված արտադրանք կամ թաղանթանյութային հյուսվածքներից պատրաստված պաստառներ և այլն	վիզուալ

(Անվանացանկը խմբ. 07.02.01 N 89)